# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**18 մարտի 2025 թվական, N 37-Ա**

### ԱՇՈՏ ՖԵԼԻՔՍԻ ՇԱՔԱՐՅԱՆԻ ՀԵՏ 30.05.2007Թ. ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹԻՎ 10 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 30-րդ գլխի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Աշոտ Ֆելիքսի Շաքարյանի դիմումը, գրացման N 15052023-06-0006 վկայականը, հողատարածքի վարձակալության 30/05/2007թ. թիվ 10 պայմանագիրը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Աշոտ Ֆելիքսի Շաքարյանի հետ 30.05.2007թ. կնքված հողատարածքի վարձակալության թիվ 10 պայմանագրի մեջ կատարելու հետևյալ փոփոխությունները և լրացումը.
   1.1 Պայմանագրի 1.1 կետից հետո լրացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ. «Հողատարածքը տրամադրվում է որպես ավտոկայանման վայր կազմակերպելու համար»:
   1.2 Պայմանագրի 3.1 կետում տարեկան վարձավճարի չափը փոխել՝ սահմանելով 210 000 /երկու հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ:
   1.3 Պայմանագրի 3.2 կետում յուրաքանչյուր ամսվա համար վարձավճարի չափը փոխել՝ սահմանելով 17 500 /տասնյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 15. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |
| 16. | ՍԱՄՎԵԼ | ԷԼԲԱԿՅԱՆ | | | |
| 17. | ՏԻԳՐԱՆ | ՊԱՊՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., մարտի 18,
Լոռու մարզ, ք. Ալավերդի